ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 հոկտեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

148
(2998)

100 դրամ

քաղաքացիական պայմանագիր
կուսակցություն

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է ՓԱՇԻՆՅԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՕԳՆԱԿԱՆԸ

ԱԺ ՔՊ պատգամավոր Հայկ Սարգսյանի եղբորը՝ Նաիրի Սարգսյանին, կանչել են ՀՀ քննչական կոմիտե ու հարցաքննել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հարցաքննությունը նրանց հոր ավտոմեքենաների յուղման կետի մոտ տեղի ունեցած պայթյունի քրեական վարույթի հետ է կապված եղել:

«Ժողովուրդ» օրաթերթը նկայացնում է, թե ինչ է իրավապահներին պատմել ՔՊ-ական պատգամավորի եղբայր, Նիկոլ Փաշինյանի նախկին օգնական Նաիրի Սարգսյանը:

«Հայտնում եմ, որ սույն թվականի հունիսի 22-ին՝ ժամը 00:17-ին, իմ ֆեյսբուքյան էջին Messenger հավելվածով ինձ անհայտ եւ անծանոթ՝ «Ռոբերտ Կասյան» ֆեյսբուքյան էջի Messenger հավելվածից ստացել եմ հաղորդագրություն՝ հետեւյալ բովանդակությամբ. «Հերդ վնաս ա տվել իմ ընտանիքին, էլի եք տրաքելու», որից հետո իմ եւ իմ ընտանիքի հասցեին տվյալ օգտատերը հնչեցրել է հայհոյանքներ, որոնք ես ջնջել եմ նամակագրությունից: Արձագանքելով՝ հարցրել եմ՝ ինչ վնասի մասին է խոսքը, սակայն նա կրկին շարունակում էր նույն բովանդակությամբ հաղորդագրություններ ուղարկել, նույնիսկ նշել է. «Էն պայթյունը հիշո՞ւմ ես, խելոք մնացե՛ք, գոնե»:

Այս ամենից հետո ես այդ հաղորդագրությունը ուղարկողին հարցրի, թե նա ինչ կապ ունի այդ պայթյունի հետ, իսկ վերջինս պատասխանեց կրկին նույն ոճով՝ նշելով. «Դրա հետ դուք կապ ունեք, ես քեզ ասում եմ՝ հանգի՛ստ մնացեք»:

Հայտնում եմ, որ ես միանգամից ենթադրեցի, որ 2022 թվականի օգոստոսի 31-ին Ն. Զարյան 42/2 հասցեում գտնվող եւ հորս՝ Զարեհ Սարգսյանին պատկանող յուղման կետի պայթյունի դեպքի մասին է խոսքը, քանի որ որեւէ ուրիշ պայթյուն տեղի չի ունեցել, հետեւաբար ենթադրում եմ, որ այդ հաղորդագրություններն ուղարկող անձը ինչ-որ առնչություն կարող է ունենալ վերոնշյալ պայթյունի դեպքին, սակայն թե ով կարող է լինել, ես ոչինչ չեմ կարող հայտնել, նույնիսկ այդ օգտատիրոջ տվյալներն ինձ ծանոթ չեն, առաջին անգամ եմ տեսել, նման անուն-ազգանունով անձի չեմ ճանաչում: Հայտնում եմ, որ ես կամ իմ ընտանիքը որեւէ մեկի հետ թշնամական հարաբերութուններ մեջ չենք, հետեւաբար չեմ կարող ասել, թե ով կարող էր նման արարք կատարել, որեւէ մեկին ես չեմ կասկածում:

Նշեմ, որ այս պայթյունի վերաբերյալ նամակագրությունից հետո շարունակում էր հաղորդագրություններ ուղարկել, նաեւ հարցրեց՝ Երեւանո՞ւմ եմ, թե՞ ոչ, որ երկրից դուրս գալու դեպքում՝ իրեն գրեմ: Ինքը կասի, կգան ինձ հետ հանդիպելու եւ ամեն ինչ կբացատրեն, եւ որ դա ինձ է պետք, իրեն պետք չէ: Ինչ-որ մարդիկ կհանդիպեն եւ կպատմեն ամեն բանի մասին:

Հայտնում եմ, որ այս ամենից հետո որեւէ կասկածելի անձ ինձ չի գրել, չի անհանգստացրել»:



Ստորեւ ներկայացվող հարկերից խուսափելու դեպքը հիրավի հավակնում է ընդգրկվել դասագրքերում՝ իր բացառիկ գործող անձով եւ գումարի չափով: Ոչ հեռավոր 2014 թվականին՝ «թալանչիների ժամանակ», ԱԺ ներկայիս նախագահ Ալեն Սիմոնյանը որոշում է իր բնակարանի հասցեում գրանցված «Սիցիլիա» ՍՊԸ-ի 1 միլիոն 422 հազար դրամ հարկային պարտավորությունը չկատարել: Հարկը գանձելու դժվարին ճանապարհին ՊԵԿ-ը անգամ ՍՊԸ-ի եւ նրա գույքի նկատմամբ հետախուզում է հայտարարում, քանզի ոչ մի կերպ ծանուցագրերով չի հայտնաբերում տիրոջը՝ Ալեն Սիմոնյանին: Ի վերջո, այժմ արդեն հպարտ Ալեն Սիմոնյանը «հասնում» է «Սիցիլիա» ՍՊԸ-ն սնանկ ճանաչելուն: Հիշեցնենք, որ պետական բյուջեի հանդեպ ունեցած պարտավորությունների վճարման նպատակով 24.10.2011 թվականին «Մյասնիկյան»-ի հարկային տեսչության կողմից 1.196.900 ՀՀ դրամի բռնագանձման հայց է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ Ալեն Սիմոնյանի ընկերության: ՀՀ վարչական դատարանի՝ 06.03.2012 թվականի թիվ ՎԴ/6127/05/11 վճռով հայցն ամբողջությամբ բավարարվել է, ինչի հիման վրա տրվել է կատարողական թերթ: Դատարանի՝ 08.06.2015 վճռով «Սիցիլիա» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ: «Սիցիլիա» ՍՊԸ-ի պարտավորությունների հանրագումարը պետական բյուջեի նկատմամբ 08.05.2014 թվականի դրությամբ կազմում էր 1.422.884 ՀՀ դրամ, որից պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով՝ 238.085 ՀՀ դրամ, որից ապառք՝ 116.973 դրամ, տույժ՝ 121.112 ՀՀ դրամ, հաստատագրված վճարի գծով՝ 908.665 ՀՀ դրամ, այդ թվում ապառք՝ 567.310 ՀՀ դրամ, տույժ՝ 341.355 ՀՀ դրամ, եկամտահարկի գծով՝ 145.959 ՀՀ դրամ, որից ապառք՝ 93.952 ՀՀ դրամ, տույժ՝ 52.007 ՀՀ դրամ, շահութահարկի գծով՝ 130.176 ՀՀ դրամ, որից ապառք՝ 84.120 ՀՀ դրամ եւ տույժ՝ 46.056 ՀՀ դրամ, որը, ըստ էության, այդպես էլ չի վերադարձվել պետական բյուջե:

Իլհամ Ալիեւի զայրույթը թերեւս մեղմելու քայլ է արվել. Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կանոնադրությունից հեռացվել է «Արարատ լեռ» բառակապակցությունը: «Ժողովուրդ» օրաթերթը 20.08.2024 թ. հոդված էր հրապարակել այն մասին, որ ՔՊ կուսակցության գլխավոր փաստաթուղթ կամ «սահմանադրություն» համարվող կանոնադրության մեջ կուսակցության սիմվոլ հանդիսացող «ձեռքսեղմում» պատկերը համարվել էր Արարատ լեռան հոմանիշ: Եվ ահա, սահմանադրությունից հայանպաստ հոդվածները վերացնելուց հետո, ՔՊ-ն արդեն հեռացրել է Արարատ լեռան անունը իր կուսակցության մայր փաստաթղթից: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ իշխող կուսակցության գլխավոր փաստաթղթում խմբագրում է կատարվել եւ հեռացվել է «Արարատ լեռ» բառակապակցությունը: Հետաքրքիր է՝ կանոնադրության սույն փոփոխությունը պետական գրանցում ստացե՞լ է պետական ռեգիստրում, թե՞ ՔՊ վարչության վերջին ընտրությունների պես կատարվել է կեղծիքով: «Ժողովուրդ» օրաթերթը հետեւողական կլինի:



Իշխանությունները Գյումրիում պատրաստվում են արտահերթ ընտրությունների: Երեկ հայտնի դարձավ, որ Գյումրու համայնքապետ Վարդգես Սամսոնյանը հրաժարական է տվել, ինչպես եւ օրեր առաջ կանխատեսել էր «Ժողովուրդ» օրաթերթը: Նրա հրաժարականի հետ միաժամանակ մանդատները վայր են դրել նաեւ «Բալասանյան» դաշինքի ավագանու անդամները: Ըստ շրջանառվող տեղեկությունների՝ Գյումրու իշխող ուժը այս որոշումն ընդունել է նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի եւ նրա որդու՝ Խաչատուր Բալասանյանի քրեական հետապնդումից հետո: Վերջիններս անցնում են Գյումրու Սեւ բերդի հարակից հողատարածքների օտարման գործով: Հիշեցնենք՝ 2021 թվականին անցկացված ՏԻՄ ընտրությունների արդյունքում ՔՊ-ն ու «Բալասանյան» դաշինքը համագործակցության հուշագիր ստորագրեցին՝ համատեղ ղեկավարելով Գյումրին: Նախորդ տարեվերջին, սակայն, ՔՊ-ն լուծարեց կոալիցիան՝ հայտարարելով, թե իրենք Գյումրիում ընդդիմություն են լինելու: Փաստացի, այս ողջ ընթացքում իշխող ուժը տարբեր ճնշումների միջոցով փորձեց Գյումրիում խլել իշխանությունը «Բալասանյան» դաշինքից, ու երբ Փաշինյանը հեծանիվով գնաց Գյումրի՝ իշխանափոխությունը ավարտվեց, քաղաքապետը հրաժարական տվեց: Ասել է թե՝ ՔՊ-ն հասավ իր բաղձալի նպատակին, ճնշումների արդյունքում «Բալասանյան» դաշինքը տեղի տվեց: Այսպիսով, եթե հոկտեմբեր-նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Գյումրու ավագանին նիստ չգումարի, ապա կլուծարվի եւ ավագանու արտահերթ ընտրություններ կլինեն, եթե համայնքի ղեկավար ընտրելու համար նիստ գումարվի եւ համայնքապետ չընտրվի, ավագանին այս դեպքում էլ է լուծարվելու:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ԱԴՐԲԵՋԱՆԸ ՈՉԻՆՉ ԷԼ ՉԻ ՋԻՋԻ». ՍՈՒՐԵՆՅԱՆՑ

Երեք օր առաջ՝ հոկտեմբերի 25-ին, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հրամանագիր է ստորագրել, որով հաստատել է Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանազատման հանձնաժողովների գործունեության կանոնակարգը:

Նշենք նաեւ, որ ավելի վաղ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը եւս ստորագրել էր «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգը վավերացնելու մասին» օրենքը:

Այս թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է քաղաքագետ Սուրեն Սուրենյանցի հետ:

-Պարոն Սուրենյանց, ի՞նչ են ենթադրում սահմանազատման վերաբերյալ տեղի ունեցած վերջին դեպքերը:

-Ադրբեջանը պատճառ չուներ չստորագրելու այդ փաստաթուղթը, որովհետեւ այն բովանդակային առումով խոցելի է Հայաստանի համար: Ադրբեջանն ուժեղ կողմ է եւ որեւէ խնդիր չունի՝ այդ փաստաթուղթը ստորագրելու, այստեղ այլ հարցեր են առաջանում. դա տեղի ունեցավ Կազանի հանդիպումից անմիջապես հետո, հետեւաբար հարց է ծագում՝ ինչի՞ դիմաց, արդյոք ինչ-որ բանի դիմա՞ց Ալիեւը ստորագրեց, այսինքն՝ ստացե՞լ է ինչ-որ բան Փաշինյանից, որ դա ստորագրել է, թե ոչ: Սա՝ մեկ, երկրորդ հարցը հետեւյալն է. փատաթուղթ ստորագրելը մի բան է, դելիմիտացիայի եւ դեմարկացիայի գործընթացը շարունակելն այլ բան է: Մենք ընդամենը ստորագրության փաստը գիտենք եւ, օրինակ, տեղեկացված էլ չենք հաջորդ սահմանագոտին որն է, որտեղ պետք է այդ գործընթացը շարունակվի:

-Ընդհանուր առմամբ, ի՞նչ վտանգներ է այս ամենը պարունակում:

-Այդ կանոնակարգը, որը վավերացվելել է նաեւ Հայաստանի խորհրդարանի կողմից, չունի քարտեզային նկարագիր: Երբ փաստաթուղթը քարտեզային նկարագիր չունի, միշտ հնարավորություն է տալու, որպեսզի տարբեր սահմանահատվածներում Ադրբեջանը կամայական մոտեցումներ ցուցաբերի, պահանջներ դնի Հայաստանի առաջ: Ամենառարկայական վտանգը դա է: Ադրբեջանը շարունակելու է իր քաղաքականությունը, անընդհատ ինչ-որ բան անելու դիմաց՝ ինչ-որ բաներ է կորզելու Հայաստանից: Ընդհանուր վտանգները սրանք են:

-Հայաստանը կրկին կգնա՞ զիջումներ անելու քայլին, ի՞նչ եք կարծում:

-Հետպատերազմյան ամբողջ վիճակն ինչի՞ մասին է... Ցավոք սրտի, հենց դրա մասին է, որ Հայաստանն անընդհատ ինչ-որ բան զիջել է:

-Կարծում եք՝ այս անգամ էլ միակողմանի կլինեն զիջումները, թե՞ ամեն դեպքում Ադրբեջանն էլ, հնարավոր է, որոշ զիջումներ անի:

-Ադրբեջանի դեպքում ես որեւէ բան զիջելու պատրաստակամություն չեմ տեսնում: Օրերս Հաքիեւը էլի խոսել է այդ մասին, որ Հայաստանը պետք է պատասխանատվության ենթարկվի առաջին պատերազմի, իրենց բառերով ասեմ, «հանցագործներին»: Ցավոք, իրենց բառապաշարի մեջ չեմ տեսնում զիջելու պատրաստակամություն:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԸՆԹԱՑԻԿ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ

2025թ. պետական բյուջեով նախատեսվող կապիտալ ծախսերի 55,8 տոկոսն ուղղվելու է պաշտպանության ոլորտին: Երեկ Ազգային ժողովում 2025 թվականի պետական բյուջեի նախագիծը ներկայացնելիս այս մասին հայտնեց ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

Նախատեսվում է, որ 2025թ. կապիտալ ծախսերը կկազմեն համախառն ներքին արդյունքի 6,6 տոկոսը, որը 2024թ. պետբյուջեով նախատեսված կապիտալ ծախսերի մակարդակին հավասար է, սակայն 2024թ. սպասվող ծախսերի համեմատ շատ է 0,6 տոկոսով:

ՀՀ ՊԱՐՏՔԸ 12 ՄԼՐԴ Է, ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է՝ 1 ՄԼՐԴ-ՈՎ ԿԱՎԵԼԱՑՎԻ

Կառավարությունը կանխատեսում է, որ 2024-ի վերջում պետական պարտքը կկազմի մոտ 49.8 տոկոս, իսկ հաջորդ տարի այն կաճի՝ հասնելով 53.5 տոկոսի: Այս մասին ասաց ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանն ԱԺ մշտական հանձնաժողովների նիստում 2025 թ. պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումներում:

«Կանխատեսում ենք, որ 2024-ի վերջում կունենանք 50 տոկոսին մոտ՝ մոտավորապես 49.8 տոկոս պետական պարտք: 2025 թվականի ավարտին պետական պարտքը կհասնի 53.5 տոկոսի, նոմինալ առումով կլինի 5 տրլն 914 մլրդ դրամ: Այսինքն՝ 5 տրլն 37 մլրդ-ից կաճի մինչեւ 5 տրլն 914 մլրդ դրամ»,-ասաց Հովհաննիսյանը՝ սա պայմանավորելով 2025-ին բյուջեի դեֆիցիտի բարձր մակարդակով:

Թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանի հետ: Զրույցի ընթացքում ընդդիմադիր պատգամավորը նշել է, որ այս իշխանությունների օրոք երկրի տնտեսությունը չի գործում եւ տնտեսական աճի թվերը, որոնք գրվում են առնչություն չունեն ՀՀ իշխանությունների հետ, այլ պարզապես կապված են ՌԴ-ի դեմ կիրառվող սանկցիաների հետ, քանի որ վերարտահանվում է ՌԴ-ից գնվածը եւ դա մեր տնտեսական զարգացման ցուցանիշ չէ:

«Քանի որ մոտենում ենք ընտրություններին, պետք է ամբոխահաճո ծախսեր անել, եւ դրա միակ տարբերակը պետական պարտքն է, ինչի համար էլ այն հասել է աստղաբաշխական՝ 12 միլիարդի, եւ նախատեսում են ավելացնել եւս մեկ միլիարդով», - նշեց Արթուր Խաչատրյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ

Գյումրու քաղաքապետ Վարդգես Սամսոնյանը հրաժարական է տվել:

Տեղեկությունը հաստատել է քաղաքապետի մամուլի քարտուղար Սոնա Առաքելյանը:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ 2021 թվականի նոյեմբերին Գյումրիու 4-րդ քաղաքապետ ընտրված «Բալասանյան դաշինքի» ընտրացուցակը գլխավորող Վարդգես Սամսոնյանը հրաժարականի դիմում է ներկայացնելու:

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նախաձեռնությամբ խորհրդարանը հոկտեմբերի 31-ին՝ ժամը 13:00-ին, արտահերթ նիստ կգումարի:

Օրակարգում «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծն է:

Հեղինակները «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Անդրանիկ Քոչարյանն ու Արմեն Խաչատրյանն են:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

«5 ՏԱՐԻ Է՝ ԳՈՐԾՈՎ ՈՉԻՆՉ ՉԵՆ ԱՐԵԼ». Ա. ԲԱԽՇՅԱՆ

«Խոստում տալը, պարզվում է, հեշտ է, բայց իրականացնելը չգիտեմ՝ դժվար է, թե անցանկալի է»:

Այս մասին Ազգային ժողովի բակում լրագրողների հետ զրույցում նշել է հոկտեմբերի 27-ի ոճրագործության ժամանակ զոհված, Ազգային ժողովի փոխխոսնակ Յուրի Բախշյանի այրին՝ Անահիտ Բախշյանը:

«Որովհետեւ, երբ ուզում են՝ բացահայտում են այն ահաբեկչությունը, որը ինչ-որ խումբ պատրաստվում էր կատարելու նույնիսկ Սերժ Սարգսյանի ժամանակ, Նիկոլ Փաշինյանի ժամանակ... Բացահայտեցին, փառք Աստծու, բայց հոկտեմբերի 27-ից անցել է 25 տարի, չեն բացահայտում: Պատճառները չեմ կարող ասել, բայց ցանկության բացակայություն եմ տեսնում: Չեմ կարող ասել՝ ինչով է պայմանավորված, բայց չափազանց դժգոհ եմ, ամբողջ հոգով ուզում եմ գոռալ ու ասել, որ մեր պետության այսօրվա վիճակը հոկտեմբերի 27-ի հետեւանք է: Դա տեսնում են բոլորը: Ուղիղ մեկ տարի առաջ Ազգային ժողովում այս հերթական հավաքույթի ժամանակ, ԱԺ նախագահին ասացի. «Ինչո՞ւ ԱԺ անվտանգության հարցերի հանձնաժողովը նիստ չի հրավիրում, չի փորձում պարզել, թե ինչ են արել: 5 տարի է, իբր, բացվել է գործը, ինչո՞ւ թեկուզ փակ լսում չեք անում, որ հասկանաք՝ ինչ է կատարվում», - մեկ տարին անցավ, ոչինչ չարեցին:

Հիմա գործն արդեն քննչականում է: Վերջերս Քյարամյանը ԱԺ-ում հաշվետվություն էր տալիս, ոչ մի պատգամավոր հարց չտվեց, չասաց՝ պարոն Քյարամյան, փետրվարից այդ գործը Ձեր ենթակայության տակ է, ի՞նչ եք արել, ինչ եք պատրաստվում անել»,- ասել է Անահիտ Բախշյանը:

Նա հայտարարեց, որ հիասթափված է Նիկոլ Փաշինյանից. «Շատ առիթներ ունեմ հիասթափվելու: Չեմ թաքցրել, ասել եմ, բայց գիտեք՝ շատ դժվար է խոստովանել, որ պետությանդ վարչապետը, որին ընտրել է ժողովրդի 60 տոկոսից ավելին, խոստումները, որ տվել է, ծրագիրը, որ գրել է հոկտեմբերի 27-ի վերաբերյալ, Կարեն Դեմիրճյանի արձանի բացման օրն ասված խրոխտխոսքերը, որ սա բացահայտվելու է, եւ այլն մազ անգամ տեղից չի շարժել, այն սպասելիքները, որ տվել է, չի արդարացրել: Սա ես ասում եմ ամենայն պատասխանատվությամբ, որպես մեկը՝ ում դիմումի հիման վրա վերաբացվեց գործը:

Ես Քյարամյանի հետ հանդիպել եմ, ոչ մի գործ չի արվել եւ առաջ չի գնում:

Ցավում եմ, մենք պարտավոր ենք պահանջել «Հոկտեմբերի 27»-ի բացահայտում՝ ներսի ու դրսի մեր թշնամիներին բացահայտելու համար, որպեսզի մեր ինքնությունը, մեր անկախությունը պաշտպանենք մինչեւ վերջ:

Մեր անկախությունը մեզնից խլելու համար սպանեցին այս մարդկանց»,- նշել է Անահիտ Բախշյանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԵՏԱՔՆՆԵԼՈՒ ԿՈՉ Է ԱՐՎԵԼ

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը հայտարարել է, որ Վրաստանում խորհրդարանական ընտրությունների արդյունքները վստահելի չեն, եւ իշխող կուսակցությանը մեղադրել է նախընտրական քարոզարշավի ընթացքում «հանրային ռեսուրսների չարաշահման, ձայներ գնելու եւ ընտրողներին ահաբեկելու» մեջ, ինչը, ըստ նրա, «խաթարել է հանրության եւ միջազգային վստահությունը արդար արդյունքի հնարավորության նկատմամբ»: Բլինքենի հայտարարությունը տարածել է ԱՄՆ պետքարտուղարությունը:

«Միջազգային դիտորդներն արդյունքները չեն որակել որպես ազատ եւ արդար: Մենք դատապարտում ենք միջազգային նորմերի բոլոր խախտումները եւ միանում ենք միջազգային եւ տեղական դիտորդների կոչերին՝ լիարժեք հետաքննելու ընտրությունների հետ կապված խախտումների մասին բոլոր հաղորդումները», - ասվում է Բլինքենի հայտարարության մեջ:

Հոկտեմբերի 26-ին Վրաստանում տեղի են ունեցել խորհրդարանական ընտրություններ: Երկրի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերջին տվյալների համաձայն՝ հաղթել է իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը՝ ստանալով ընտրողների 53,93 %-ի աջակցությունը: Դրան հաջորդում են հինգ տոկոսի շեմը հաղթահարած չորս կուսակցություններ՝ «Կոալիցիան հանուն փոփոխությունների»՝ 11,03 %, «Միացյալ ազգային շարժում»՝10,16 %, «Ուժեղ Վրաստան»՝8,81 % եւ «Գախարիան հանուն Վրաստանի»՝7,76 %:

«ՀԱՐՐԻՍԸ ՊԵՏՔ Է IQ ԹԵՍՏ ՀԱՆՁՆԻ». ԹՐԱՄՓ

ԱՄՆ հանրապետական թեկնածու, նախկին նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ դեմոկրատ թեկնածու Քամալա Հարրիսը պետք է IQ թեստ հանձնի:

«Քամալան շատ ցածր IQ-ով մարդ է: Նրա հետ ինչ-որ բան այն չէ, ինչ-որ բան պակասում է»,- Ռոգանի փոդքասթի ժամանակ ասել է Թրամփը:

Նա նշել է, որ ամերիկացի լրագրող Կուպերի հարցերին Հարրիսը չի կարողացել տալ ուղիղ պատասխաններ :

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԳՆ-Ն ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Թուրքիայի արտգործնախարարությունը հաղորդագրություն է տարածել Իսրայելի կողմից Իրանի դեմ իրականացված հարձակման վերաբերյալ:

Հաղորդագրության մեջ թուրքական կողմը խստորեն դատապարտում է տեղի ունեցածը:

«Միջազգային հանրությանը կոչ ենք անում օրենքի կիրառման եւ Նեթանյահուի կառավարությանը կանգնեցնելու համար հնարավորինս շուտ գործի անցնել:

Մերձավոր Արեւելքում խաղաղության վերահաստատման համար պարտադիր է տարածաշրջանի երկրների եւ արտատարածաշրջանային դերակատարների կողմից խելամիտ եւ ողջախոհ դիրքորոշման որդեգրումը», - նշվել է հաղորդագրությունում:

ԻՆՉՊԵՍ ԱՎԱՐՏՎԵՑԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆԻՆ ԴԱԺԱՆ ՕՐԵՐ ԵՆ ՍՊԱՍՎՈՒՄ

Վրաստանում շաբաթ օրը՝ հոկտեմբերի 26-ին, խորհրդարանական ընտրություններ էին անցկացվում: Ընտրությունն ասիճանաբար վերածվեց կռվի, բանգի քաղաքական ներկայիս իշխանությունը չի ընդունում ընտրության արդյունքները, Վրաստանում ասիճանաբար իրավիճակն ավելի է լարվում: Ինչպես ասում են տեղի լրագրողները՝ Վրաստանին բիրտ, դաժան օրեր են սպասվում:

Վրաստանում խորհրդարանական ընտրությունում հաղթանակ է տարել ընդդիմադիր «Եվրոպական Վրաստան» կուսակցությունը `հավաքելով ձայների 53,92 %-ը, հայտնում է Վրաստանի ԿԸՀ-ն: Խորհրդարան է անցել 4 ընդդիմադիր ուժ: Հիշեցնենք՝ Վրաստանի իշխող «Վրացական երազանքը» էքզիթ փոլի արդյունքներով հավաքել է 56%: Վրաստանում խորհրդարանական ընտրություններն անցկացվել են համամասնական ընտրակարգով: Վրաստանի քաղաքացիներն ընտրում են օրենսդիրի 150 պատգամավորի:

Ընտրությունները, ինչպես սպասում էինք, առանց վեճերի եւ արտառոց իրավիճակների չանցան:

Անհայտ անձինք ներխուժել են խոշորագույն ընդդիմադիր «Միասնական ազգային շարժում» կուսակցության գրասենյակ, ավերել են այն տարածքը, որտեղ կուսակցությունը ճեպազրույցներ է անցկացնում, ընդհարումների մեջ են մտել ընդդիմության կողմնակիցների հետ:

Ընտրությունների լարված իրավիճակից հետո ընտրատեղամասերի դիմաց կուտակվում էին հատուկ ջոկատայիններ ահաբեկչություններից եւ վեճեից խուսափելու համար: Կուսակցությունների համակիրները ընտրատեղամասերում արցունքաբեր գազ եւ սփրեյ են կիրառել:

Մի քանի տասնյակ ընտրատեղամասերի դիմաց ծեծկռտուք եւ վիճաբանություններ են տեղի ունեցել:

Երեկոյան՝ արդյունքներից հետո, ընդդիմությունը տոնում էր հաղթանակը, իսկ իշխող կուսակցությունը հոգեվարքի մեջ էր:

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հրաժարվել է ճանաչել խորհրդարանական ընտրությունները եւ հայտարարել դրանց ամբողջական կեղծման մասին: Այս մասին հայտնում է ՏԱՍՍ լրատվականը: Վրաստանի նախագահը կոչ է արել բնակչությանը երկուշաբթի օրը բողոքի ցույց անցկացնել Թբիլիսիում խորհրդարանի շենքի մոտ: Զուրաբիշվիլին Վրաստանի ներկայիս իշխանությանն անվանել է ոչ լեգիտիմ:

Ինչպես հաղորդում է Վրաստանում գործող «Ալիք Մեդիա» լրատվամիջոցը՝ վեճերին անդրադարձել է նաեւ Սալոմե Զուրաբիշվիլին՝ նշելով, որ ամոթալի եւ անբարոյական է էթնիկ փոքրամասնության օգտագործումը՝ ընտրությունները կեղծելու նպատակով:

Ըստ քաղաքագետների՝ Վրաստանում առաջիկայում թեժ եւ լարված իրավիճակներ են սպասվում: Նրանք տալիս են հստակ որակում, որ Վրաստանին դաժան օրեր են սպասվելու ընտրության արդյունքներից հետո:

Հավելենք նաեւ, որ Վրաստանի ընդդիմադիր կուսակցությանը հաղթանակի առթիվ առաջինը շնորհավորել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, ապա Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը: Սա կարելի է համարել հստակ քաղաքական ակնարկ:

Սպասենք Վրաստանում սպասվելիք բողոքի ակցիաների ալիքին եւ իշխանության քայլերին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԸՀ-Ն ՍԱՀՄԱՆԵԼ Է 2025-Ի ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՐԸ

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հոկտեմբերի 28-ի արտահերթ նիստում սահմանել է 2025 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրերը: Դրանք են՝ 2025 թվականի մարտի 30, հունիսի 8, հոկտեմբերի 5:

Մեկ այլ որոշմամբ ԿԸՀ-ն փոփոխություն է կատարել 2022 թվականի դեկտեմբերի 2-ի «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամներ նշանակելու մասին» թիվ 89-Ա որոշման մեջ: Թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ Լուսինե Էդմոնդի Մովսեսյանը ԿԸՀ է ներկայացրել իր՝ որպես թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի պարտականություններն ու լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ դիմում: Ընտրական օրենսգրքի 45-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ ԿԸՀ-ն արձանագրել է ԸԸՀ անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստը:

Թիվ 29 ԸԸՀ-ի թափուր տեղի մրցույթի համար ԿԸՀ-ն, սահմանված կարգով, կհայտարարի:

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է

2024 թվականին Հայաստանում Հնդկաստանի քաղաքացիների քանակը էականորեն նվազել է: Այս մասին ԱԺ հանձնաժողովների համատեղ նիստում 2025 թվականի բյուջեի նախագծի քննարկման ժամանակ նշեց ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

«Այսինքն, եթե խոսքն աշխատանքային միգրանտների մասին է, ապա, իմ տվյալներով, նրանց քանակը էականորեն նվազել է», - ասել է նա:

Սակայն, Հովհաննիսյանը չգիտեր, թե ՀՀ ժամանած Հնդկաստանի քաղաքացիները որպես զբոսաշրջի՞կ են եկել, թե՞ աշխատելու նպատակով. «Ճիշտն ասած՝ դրան չեմ տիրապետում»:

ԲԼՈԳԵՐՆԵՐԸ՝ ՊԵԿ-ՈՒՄ

Երեկ՝ հոկտեմբերի 28-ին, Ազգային ժողովում քննարկվում էր 2025 թվականի բյուջեի նախագիծը:

Նախագծի ներկայացման ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը բազմիցս շեշտեց, որ ՀՀ պետական բյուջեն կուտակվում է հարկերի շնորհիվ: Սրան զուգահեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեում բլոգերները քննարկում են ունեցել Ռուստամ Բադասյանի հետ՝ բլոգինգը հարկային դաշտ մտցնելու համար:

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

2024 թվականի հոկտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրեն Ա. Աբազյանի գլխավորությամբ տեղի ունեցավ Գերիների, պատանդների եւ անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստը:

Նիստի ընթացքում հանձնաժողովի նախագահը՝Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրեն Ա. Աբազյանն անդրադարձավ անհայտ կորած անձանց ճակատագիրը պարզելու ուղղությամբ կատարված աշխատանքներին:

Ամփոփվեցին բռնի անհետացման վերաբերյալ գործերով կատարված աշխատանքների արդյունքները եւ ձեռնարկվելիք միջոցառումները:

Այնուհետեւ քննարկվեցին ծնողների անունից ներկայացված առաջարկությունները եւ կայացվեցին համապատասխան որոշումներ:

ՎԵՐԱԲԱՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԸ

«ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27»-Ի ԳՈՐԾՈՎ ՀԱՐՅԱՔՆՆՎԵԼ Է 24 ՎԿԱ

ՀՀ գլխավոր դատախազությունը հաղորդագրություն է տարածել Հոկտեմբերի 27-ի գործով 2019-2024 թվականների ընթացքում կատարված վարուքային գործողությունների մասին:

Ն2վում է, որ 2019 թվականի դեկտեմբերի 27-ին վերսկսվել է 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Նաիրի Հունանյանի եւ մյուսների կողմից տեռորիստական ակտ կատարելու վերաբերյալ քրեական գործից (քրեական վարույթից) 2004 թվականի հուլիսի 11-ին անջատված եւ 2004 թվականի նոյեմբերի 11-ին կարճված քրեական գործը:

«Վերսկսման համար հիմք է հանդիսացել տուժողի իրավահաջորդ Անահիտ Բախշյանի եւ նրա ներկայացուցչի՝ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված բողոքը, որով վերջիններս խնդրել էին վերացնել ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության պետի տեղակալի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին 2004 թվականի նոյեմբերի 11-ին կայացված որոշումը:

Վերսկսված քննության ընթացքում ցմահ դատապարտյալ Նաիրի Հունանյանը հարցաքննվել է եւ տվել ցուցմունքներ դեպքի հանգամանքների վերաբերյալ:

Քննության ընթացքում հարցաքննվել են նաեւ ահաբեկչական խմբի անդամներ, դատապարտյալներ Կարեն Հունանյանը, Դերենիկ Բեջանյանը եւ Աշոտ Կնյազյանը: Համապատասխան քրեակատարողական հիմնարկներից առգրավվել են խմբի մյուս անդամներ Էդուարդ Գրիգորյանի, Վռամ Գալստյանի եւ Համլետ Ստեփանյանի անձնական գործերը՝նրանց մահվան պատճառների վերաբերյալ մի շարք հարցեր պարզաբանելու համար:

Քննության ընթացքում Գլխավոր դատախազության արխիվից առգրավվել է քրեական գործին (քրեական վարույթին) կցված փաթեթը, Դատական դեպարտամենտի արխիվից առգրավել են քրեական գործի դատաքննական հատորները եւ քրեական գործին կցված ձայնագրությունները, այլ նյութեր, ՀՀ ոստիկանությունից եւ այլ ստորաբաժանումներից առգրավվել են դեպքի վերաբերյալ հետաքրքրություն ներկայացնող գործեր:

Նախաքննության ընթացքում առգրավված տեսագրություններով եւ ձայնագրություններով նշանակվել են տեսաձայնագրային փորձաքննություններ, ստացվել են դրանց եզրակացությունները: 2019-2024 թվականների ընթացքում քրեական գործի (վարույթի) ընթացքում հարցաքննվել է 24 վկա, 4 դատապարտյալ, կատարվել է 1 առերեսում: Հանձնարարություններ են տրվել տարբեր օպերատիվ ստորաբաժանումներին՝ դեպքի հանգամանքների վերաբերյալ տարբեր հարցեր պարզաբանելու նպատակով:

Քննվել են քրեական վարույթի նյութերին կցված տարբեր փաստաթղթեր եւ էլեկտրոնային կրիչներ, այդ թվում՝ տեսագրություններ: Գլխավոր դատախազի՝ 2024 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ քրեական վարույթով նախաքննությունը շարունակելը հանձնարարվել է քննչական կոմիտեին:

Նախաքննությունն ընթացքի մեջ է»,- տեղեկացնում է դատախազությունը:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԼՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄԱՐՄԻՆԸ ԿԱՊՎԱԾ Է ԵՂԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել «Հաղթանակ» զբոսայգում հայտնի «Արեւիկ» արհեստական լճակում տղամարդու առեղծվածային մահվան դեպքից:

Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ տղամարդու մարմինը թելերով կապված ու քարերով պատված է եղել: Ըստ նախնական վարկածի՝ տղամարդը ֆինանսական խնդիրներ է ունեցել, եւ ավելին՝դեպքի վայրում իրավապահների հետ է եղել նաեւ նրա որդին:

Ինքնասպանություն է սա, թե սպանություն՝ ցույց կտա քննությունը, սակայն փաստ է, որ արդեն սպանության հատկանիշներով քրեական վարույթ է նախաձեռնվել:

Ավելի վաղ shamshyan.com-ը հայտնել էր, որ հոկտեմբերի 28-ին առեղծվածային դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 9:40-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ «Հաղթանակ» զբոսայգում հայտնի «Արեւիկ» արհեստական լճակում դի կա: Իրավապահները նշված լճակում բերանքսիվայր հայտնաբերել են, ըստ նախնական տեղեկությունների, տղամարդու դի:

40–ԱՄՅԱ ՏՂԱՄԱՐԴԸ ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼ Է ՄՈՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հոկտեմբերի 27-ին՝ ժամը 23:00-ին, Շենգավիթի 6-րդ փողոցի տներից մեկում սպանություն է եղել: 40-ամյա տղամարդը սպանել է իր մորը:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների՝դեպքի վայր շտապած իրավապահները պարզել են, որ նույն օրը՝ ժամը 17:30-ից մինչեւ 23:00-ն, նշված հասցեում Դ. Ե.-ն ձեռքերով հարվածներ է հասցրել մոր՝ 1952 թվականին ծնված Ց. Հ.-ի դեմքին եւ գլխին՝ պատճառելով մահ:

Տղամարդը ձերբակալված է:

ԿԻՆԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

Խաչփար համայնքում 44-ամյա տղամարդուն կյանքից զրկած կնոջը մեղադրանք է ներկայացվել եւ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին ՀՀ քննչական կոմիտեից:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Խաչփար համայնքում գտել էին 44-ամյա Վարդան Ա.-ին սպանած կնոջը: Նա իրավապահներին հայտնել է, որ «տղամարդն ինքն է իրեն գցել դանակի վրա», սակայն ուշագրավն այն է, որ տղամարդու մարմնի վրա հայտնաբերվել է դանակի 6 հարված:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ սպանված տղամարդն ու ձերբակալված կինը արտաամուսնական կապի մեջ են եղել: Նշանակվել է դատահոգեբանական փորձաքննություն, իրավապահները տվյալներ ունեն, որ կինն առողջական խնդիրներ ունի:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 24-ին, առանձնակի դաժանությամբ սպանություն է տեղի ունեցել Արարատի մարզում: Խաչփար համայնքում գտել էին 44-ամյա Վարդան Ա.-ին , ում պարանոցի հատվածում դատաբժիշկը հայտնաբերել էր խոհանոցային դանակը, մարմնի վրա էլ՝ սուր կտրող-ծակող առարկային հարվածի մի քանի հետքեր:

Տեղում պարզվել էր նաեւ, որ 46-ամյա կինը բժիշկներին հայտնել է, որ տղամարդը ինքնասպանություն է գործել, սակայն Արարատի մարզի ոստիկաններն ու քննիչները տաք հետքերով պարզել են, որ տեղի ունեցածը սպանություն է, եւ կասկածյալ կնոջը, սպանություն կատարելու կասկածանքով, տեղափոխել են ոստիկանության Մասիսի բաժին:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՌՆԱՑԵԼ Է ՊԱՅԹԵՑՆԵԼ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ

2024 թվականի հոկտեմբերի 26-ին՝ ժամը 23:07-ին, ահազանգ է ստացվել այն մասին, որ մի քաղաքացի մուտք է գործել ՀՀ նախարարությունների շենք՝ դրսեւորել ագրեսիվ վարքագիծ: Վերջինս հայտնաբերվել է ոստիկանության ծառայողների կողմից եւ տեղափոխել ոստիկանության բաժին՝ ճանապարհին բղավելով, որ բենզատար մեքենայով եկել է Հանրապետության հրապարակ, որպեսզի այն պայթեցնի:

Նույն օրը՝ ժամը 23:11-ին, ահազանգ է ստացվել ՀՀ ՆԳՆ ՃՈ-ից այն մասին, որ անհայտ քաղաքացին բենզատար մեքենան կայանել է Հանրապետության հրապարակի կենտրոնում, ապա դիմել փախուստի: Միաժամանակ հաղորդում է ստացվել ոստիկանությունից առ այն, որ անհայտ քաղաքացին Երեւան-Սեւան մայրուղում գտնվող բենզալցակայանից առեւանգել է անհայտ մակնիշի բենզատար եւ հեռացել անհայտ ուղղությամբ:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին, 264-րդ հոդվածի 1-ին եւ 297-րդ հոդվածի 1-ին մասերով, նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում պարզվել է, որ հիշյալ անձը Երեւան քաղաքի 36-ամյա բնակիչ է: Վերջինս, վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, հանցավոր արարքներ կատարելու հիմնավոր կասկածի հիմքով, ձերբակալվել է:

Նախաքննության ընթացքում Հանրապետության հրապարակում եւ ԿԳՄՍ նախարարության մասնաշենքում կատարվել են դեպքի վայրերի զննություններ, որոնց արդյունքում պարզվել է, որ Հանրապետության հրապարակի կենտրոնական մասում կայանված է եղել «ԿԱՄԱԶ» մակնիշի, բեռնատար մեքենա: Պարզվել է նաեւ այն ընկերությունը, որին պատկանում է նշված բենզատարը, որի պահոցում բենզին չի եղել:

Նախաքննության ընթացքում հարցաքննվել են մի շարք անձինք:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից միջոցներ են ձեռնարկվում՝ Երեւան-Սեւան ավտոճանապարհին գտնվող բենզալցակայանից բենզատար մեքենան առեւանգելու հանգամանքները, դրան ձերբակալված անձի առնչությունը եւ դեպքի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ պարզելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հոկտեմբերի 25-ից 28-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 190 դեպք, որից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԻՐԱՆՑՆ ԱՌԱՆՑ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ Է ՄՆԱՑԵԼ

Հոկտեմբերի 23-ին Ազգային ժողովի նիստում վարչապետ Նիկոլ Փաշինյանը, պատասխանելով ընդդիմադիր պատգամավորների հարցերին, Կիրանցում սահմանագծումն ու սահմանազատումը հաջողություն համարեց՝ հայտարարելով. «Սա մեծ հաջողություն է: Եվ, առաջին հերթին՝ անվտանգության հետ կապված: Հիշո՞ւմ եք, երբ բոլորը խոսում էին այն մասին, թե ինչպես են երեխաները դպրոց գնալու Կիրանց գյուղում: Երեխաները դպրոց են գնում հաճույքով եւ ապահովության զգացումով: Կիրանցում դպրոց հաճախելը վերջին 35 տարում երբեք ավելի անվտանգ չի եղել: Մենք ցանկանում ենք նման իրավիճակ ստեղծել Հայաստանի բոլոր սահմանամերձ գյուղերում»: Կիրանցում դպրոցի խաղահրապարակը Ադրբեջանի հետ սահման հանդիսացող պատից մոտ 40 մետր հեռավորությամբ, միջպետական ճանապարհի եզրին է գտնվում, երեխաները այնտեղ չեն խաղում. վախենում են: Նիկոլ Փաշինյանը ցանկանում է Կիրանցի նման իրավիճակ ստեղծել Հայաստանի բոլոր սահմանամերձ գյուղերում: Գյուղի հողատարածքները Ադրբեջանին հանձնելուց հետո՝ Կիրանցին շատ քիչ արոտավայր է մնացել, որի պատճառով կովերը մորթել, ծախել են, գյուղում ընդամենը մոտ մեկ տասնյակ կով է մնացել: Նիկոլ Փաշինյանը ցանկանո՞ւմ է, որ Հայաստանի սահմանամերձ բոլոր գյուղերը առանց արոտավայրի ու խոշոր եղջերավոր անասունների մնան:

ԱՇԽԱՏՈՂՆԵՐՆ ԱՆՎԱՆԱՔԱՐՏԵՐ ՉՈՒՆԵՆ

Իջեւան քաղաքում գործող բազում սուպերմարկետների աշխատողներ անվանաքարտեր(բեյջ) չունեն, «Ֆրեշ սուպերմարկետի աշխատողները խանութի անվանումով ասեղնագործված շապիկներ են կրում: Հոկտեմբերի 25 -ին այդ սուպերմարկետի վաճառողուհին մեր լրագրողին ասաց, որ իրենց խանութում լուսանկարելն արգելված է, հարցրինք, թե ո՞ր օրենքով է արգելված: Այդ հարցին պատասխանելու համար վաճառողուհին գնաց մենեջերի մոտ, երկար բացակայելուց հետո վաճառողուհին եկավ եւ ասաց, որ մենեջերը տեղում չէ: Նիկոլ Փաշինյանի հայրենի Իջեւանում ՀՀ օրենքները չեն գործում:

«ԻՋԵՎԱՆԻ» ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Տավուշի մարզպետարանում մոտ ութ տասնյակ աշխատողներ կան, որոնք բոլորը Իջեւան համայնքի բնակիչներ են: Տավուշի մարզպետարանը կարելի է ավանել «Իջեւանի համայնքապետարան»: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարց ենք ուղղել, թե ինչու Տավուշի մարզպետի աշխատակազմում Նոյեմբերյան, Դիլիջան, Բերդ համայնքների բնակիչներ չկան, միայն Իջեւան համայնքի բնակիչներ են: Մարզպետարանից պատասխանել են. «Օրենքով սահմանված կարգով՝ Մարզպետի աշխատակազմում թափուր պաշտոնները համալրվում են մրցույթով: Դիլիջան, Բերդ եւ Նոյեմբերյան համայնքներից թափուր պաշտոնների համալրման համար հայտարարված մրցույթներին մասնակցելու դիմորդներ չեն եղել»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՒՇԱԳՐԱՎ ԹՎԵՐ

ԻՆՉ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐ ԵՆ ԳՐԱՆՑՎԵԼ ՀՀ-ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, թե 2023 թվականին ինչ արտակարգ դեպքեր են գրանցվել Հայաստանի Հանրապետությունում:

Այսպիսով՝ 2023 թվականին հանրապետությունում գրանցվել է 13 953 արտակարգ դեպք, տուժել է 16 330 մարդ (516 զոհ, 15 814 վիրավոր), 197-ը փրկվել է, իսկ 5 422-ը՝ տարհանվել:

Տարերային վտանգավոր երեւույթներից տուժել է 10 մարդ, որոնցից մեկը՝ կին: Զոհվել են 4-ը, իսկ վիրավորվել՝6-ը, որոնցից մեկը՝ կին: Փրկվել է 1 հոգի: Տարհանվել է 5 143 հոգի:

Տեխնածին արտակարգ դեպքերից 2023 թվականին տուժել է 7 125 անձ, որոնցից 2 592-ը՝ կանայք: Տեխնածին արտակարգ դեպքերի հետեւանքով զոհվել է 428 մարդ, որոնցից 110-ը եղել են կանայք: Վիրավորվել է 6 697 անձ, որոնցից 2 482-ը՝ կին: Փրկվել է 194 անձ, նրանցից 37-ը՝ կին: Տարհանվել է 279 մարդ:

Սոցիալ-կենսաբանական արտակարգ դեպքերից տուժել է 9 195 մարդ, որոնցից 3 788-ը կանայք են. զոհվել են 84-ը, որոնցից 36-ը կանայք են: Սոցիալ-կենսաբանական արտակարգ դեպքերից վիրավորվածների քանակը շուրջ 9 111 է, որոնցից 3 752-ը կանայք են. փրկվել է ընդամենը 2 մարդ: Տարհանվածներ չեն եղել:

Գրանցված արտակարգ դեպքերի 4.2%-ը տարերային վտանգավոր երեւույթներ են, որոնց հետեւանքով տուժել է 10 մարդ (4 զոհ, 6 վիրավոր), մեկը փրկվել է, 5 143-ը՝ տարհանվել:

Ուժեղ քամու, փոթորիկի, մրրիկի, պտտահողմի, փոշեփոթորիկի 99 դեպք է գրանցվել 2023 թվականին, որի պատճառով տարհանվել է 3 մարդ: Տուժած մարդիկ չկան:

Ամպրոպի եւ կայծակի 7 դեպք է գրանցվել, որից տուժել է 5 մարդ, 3-ը վիրավորվել են, 2-ը՝ զոհվել: Տարհանված անձինք չեն եղել:

2023 թվականին տարերային վտանգներից կարկուտի 37 դեպք է գրանցվել, որից տուժածներ, զոհվածներ եւ տարհանվածներ չկան: Տեղատարափ անձրեւի 19 դեպք է գրանցվել, որի հետեւանքով 11 մարդ տարհանվել է:

Ձյան առատ դեպքերը 2023 թվականին գրանցվել են ինը, որի պատճառով տարհանվել է 1037 մարդ:

Բքի եւ ձնահողմի 30 դեպք է գրանցվել, որի պատճառով տարհանվել է 3081 մարդ: Մերկասառույցի 92 դեպք է գրանցվել, որի հետեւանքով 1009 մարդ տարհանվել է:

Վեգետացիայի շրջանում գրանցվել է 2, սողանքի, հողասանքի՝3, սելավի՝4 դեպք: Տուժածներ չեն եղել:

Դարափուլի (փլվածք, նստվածք) դեպք 2023 թվականին գրանցվել է 12-ը, որի հետեւանքով տուժել է 3, մահացել 2, վիրավորվել 1 մարդ: Փրկվել է 1 մարդ:

Քարաթափվածքի դեպքերը եղել են 46-ը, որից տուժել է 1 եւ վիրավորվել նույնպես 1 մարդ:

2023 թվականին ձնահյուսի 1 դեպք է գրանցվել, որից տուժածներ, զոհվածներ եւ տարհանվածներ չկան:

Անտառային հրդեհների 22 դեպք է տեղի ունեցել, իսկ տորֆային հրդեհի 2 դեպք: Տուժածներ, զոհվածներ եւ տարհանվածներ այս դեպքերի պատճառով չկան:

Հեղեղման, գետերի վարարումների 4 դեպք է գրանցվել 2023 թվականին, որի հետեւանքով 2 մարդ տարհանվել է:

2023 թվականին երկրաշարժերի գրանցված թիվը 55-ն է, սակայն, բարեբախտաբար, երկրաշարժի հետեւանքով տուժածներ, զոհվածներ եւ տարհանվածներ չկան:

Գրունտային ջրերի մակարդակի բարձրացման 2 դեպք է գրանցվել, որից տուժածներ չկան:

Վայրի կենդանիների հարձակման 145 դեպք է գրանցվել, որից տուժել եւ վիրավորվել է 1 մարդ:

Քաղաք Երեւանում տարերային վտանգավոր երեւույթների 34 դեպք է գրանցվել, Արագածոտնի մարզում՝ 49, Արարատի մարզում՝7, Արմավիրի մարզում՝3, Գեղարքունիքի մարզում՝ 30, Լոռու մարզում՝ 52, Կոտայքի մարզում՝ 38, Շիրակի մարզում՝33, Սյունիքի մարզում՝65, Վայոց ձորի մարզում՝179, Տավուշի մարզում՝46:

Հավելենք նաեւ, որ 2023 թվականին արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ հետեւանքների վերացման նպատակով պատրաստվել եւ ուսուցանվել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի 1737 ղեկավար եւ մասնագետ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ «ԴՈՄՈՒՍ»-Ի ՀՐԴԵՀԻՑ

Հոկտեմբերի 7-ին՝ ժամը 12:57-ին, «Դոմուս» առեւտրի կենտրոնում հրդեհ էր բռնկվել, ինչը գնալով թեժացել էր եւ ամբողջ շենքը հայտնվել էր կրակի մեջ:

Հրդեհի բարդությունը որակվել էր «Թիվ 3» կանչ:

«Դոմուս»-ի հրդեհը մեկուսացվեց ժամը 15:23-ին, մարվեց՝ 16:11-ին:

«Դոմուս» առեւտրի կենտրոնի ամբողջությամբ այրվելուց հետո՝ հաջորդ օրը՝ հոկտեմբերի 8-ին, ՀՀ քննչական կոմիտեն Ոստիկանությունից ստացել է «Դոմուս» ՓԲԸ-ի հաղորդումը՝ Իսակովի պողոտայի 29/1 հասցեում գտնվող ընկերության պահեստային մասից հրդեհի բռնկման եւ խանութի արվելու մասին, ինչով, ըստ հաղորդման, նախնական տվյալներով ընկերությանը շուրջ 800 միլիոն դրամի գույքային վնաս է պատճառվել:

Արդեն հոկտեմբերի 9-ին X-Group ընկերության մարքեթինգի ղեկավար Սեդա Հովսեփյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր անձնական էջում հրապարակում է կատարել՝ հայտնելով, որ ընկերությունը խոստանում է կես միլիոն դրամ պարգեւավճար այն քաղաքացուն, որը կտրամադրի կադրեր հրդեհի բռնկման սկզբնական ժամանակահատվածից:

ՀՀ քննչական կոմիտեի մամուլի քարտուղար Գոռ Աբրահամյանը «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեց, որ նախաքննություն է իրականացվում, փորձաքննություններ են նշանակված եւ սպասում են եզրակացությունների:

ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐԿ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ 2023 թվականին ՀՀ-ում ջրային ավազան թափված եւ օդային ավազան արտանետված վնասակար նյութերի համար վճարված հարկերի մասին:

2023 թվականին ջրային ավազան թափված աղտոտիչ նյութերի դիմաց հարկը կազմել է բնապահպանական ընդհանուր հարկերի 18.7%-ը, արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի դիմաց հարկը՝ 2.1%, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց հարկը՝ 68.9%, թափոնակուտակիչներում թափոնների տեղադրման դիմաց հարկը՝10.3%:

Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ՀՀ-ի ո՞ր մարզերն են ամենաշատ հարկը վճարել 2023 թվականին՝ ջրային ավազան թափված եւ օդային ավազան արտանետված վնասակար նյութերի համար:

Ցանկը սկսենք մայրաքաղաք Երեւանից: Մայրաքաղաք Երեւանում 2023 թվականին ջրային ավազան թափված վնասակար նյութերի համար վճարված հարկը կազմել է շուրջ 942 միլիոն 15 հազար դրամ, իսկ օդային ավազան արտանետված վնասակար նյութերի համար՝70 միլիոն 829 հազար դրամ:

Արարատի մարզում 2023 թվականին ջրային ավազան թափված վնասակար նյութերի համար վճարված հարկը կազմել է 11 միլիոն 234 հազար դրամ, իսկ օդային ավազան արտանետված վնասակար նյութերի համար՝13 միլիոն 104 հազար դրամ:

Կոտայքի մարզում 2023 թվականին ջրային ավազան թափված վնասակար նյութերի համար վճարված հարկը կազմել է 15 միլիոն 995 հազար դրամ, իսկ օդային ավազան արտանետված վնասակար նյութերի համար՝13 միլիոն 345 հազար դրամ:

Սյունիքի մարզում 2023 թվականին ջրային ավազան թափված վնասակար նյութերի համար վճարված հարկը կազմել է 29 միլիոն 778 հազար դրամ, իսկ օդային ավազան արտանետված վնասակար նյութերի համար՝3 միլիոն 987 հազար դրամ:

Ընդհանուր առմամբ ՀՀ-ում 2023 թվականին ջրային ավազան թափված վնասակար նյութերի համար վճարված հարկը կազմել է 1 միլիարդ 26 միլիոն 441 հազար դրամ, իսկ օդային ավազան արտանետված վնասակար նյութերի համար՝ 116 միլիոն 174 հազար դրամ:

Նյութերը՝Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆԻ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 35 պատահար. 2 մարդ մահացել է, 57-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ

Պետական եկամուտների կոմիտեն հայտնում է, որ ՊԵԿ պաշտոնական կայքում հրապարակվել է 2024 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի եւ վճարների վերաբերյալ տեղեկատվությունը:

1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2024 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում պետական բյուջե ընդհանուր առմամբ վճարվել է ավելի քան 1 տրիլիոն 323 միլիարդ 205 միլիոն դրամ:

Հարկային մարմին կատարված վճարումների գումարը կազմել է ավելի քան 1 տրիլիոն 95 միլիարդ 131 միլիոն դրամ, իսկ մաքսային մարմին կատարված վճարումների գումարը՝ ավելի քան 228 միլիարդ 74 միլիոն դրամ:

Հարկային մարմին կատարված վճա1000 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ ցանկը հասանելի է ՊԵԿ պաշտոնական կայքի «Տեղեկություն հարկ վճարողների վերաբերյալ» բաժնի «Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր» ենթաբաժնում:

Ցանկի առաջին հորիզոնականում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ն է, երկրորդը՝ «Մոբայլ սենթր արթը», երրորդը՝ «Գրանդ Տոբակոն», ապա «Գազպրոմ Արմենիան»: Խոշոր հարկ վճարողների ցանկում է «Ամերիաբանկը»՝ վեցերորդ հորիզոնականում, «Ֆիլիպ Մորրիս Արմենիան»՝ ութերորդ հորիզոնականում, «ՎԻՎԱ Արմենիան»՝ իններորդ հորիզոնականում, «Սիթի», «Վայլբերրիզ», «Ֆլեշ», «ԱԿԲԱ բանկ», «Ինեկոբանկ», «Դիջիթեյն» եւ այլ կազմակերպություններ:

ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՆ ԱՆՑԱՆԵԼԻ ԵՆ

Փրկարար ծառայությունը տեղեկացնում է, որ ՀՀ տարածքում ավտոճանապարհներն անցանելի են:

Վրաստանի ՆԳՆ ԱԻ դեպարտամենտից եւ ՌԴ ԱԻՆ Հյուսիսային Օսիայի ճգնաժամային կառավարման կենտրոնից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» Գ

MyHome ՀԱՐԹԱԿԸ՝ ՏՈՒՆ ԷՔՍՊՈՅՈՒՄ

Տան ընտրությունից մինչեւ վարկավորում, ամբողջ գործընթացը՝ օնլայն: «Ամերիաբանկը» մասնակցում է Տուն էքսպոյին՝ ներկայացնելով հիփոթեքային օնլայն վարկավորման համար նախատեսված MyHome հարթակը: Այն իր բնույթով առաջինն է շուկայում, որը հնարավորություն է տալիս ընտրելու բնակարան եւ վարկավորման ողջ գործընթացն անցնել օնլայն:

«Ամերիաբանկի» MyHome պրոդուկտի ղեկավար Տիգրան Գրիգորյանը լրագրողների հետ զրույցում հայտնեց, որ MyHome-ի ստեղծման առաջին իսկ օրվանից նպատակ են ունեցել անշարժ գույքի ձեռքբերման գործարքները դարձնել ավելի ճկուն եւ հարմարավետ հաճախորդների համար:

«Հաճախորդները MyHome.am հարթակի օգնությամբ կարողանում են գտնել իրենց նախընտրած տունը, տեղում դիմել հիփոթեքային վարկի համար ու հաշված րոպեների ընթացքում ստանալ հաստատումը: Դրանից հետո ամբողջ գործընթացը նորից տեղի է ունենում առցանց. բանկ հաճախելու անհրաժեշտություն չկա: Միայն պետք է այցելել նոտարական գրասենյակ՝ պայմանագրի վավերացման համար», - ասաց Գրիգորյանը:

«Ամերիաբանկ» հիփոթեքային վարկի համար կարող են դիմել ինչպես Հայաստանի քաղաքացիները, այնպես էլ սփյուռքի մեր հայրենակիցները:

«Մենք ներկայացնելու ենք նաեւ պետական աջակցության այն ծրագրերը, որոնց միացել է «Ամերիաբանկը» եւ որոնք լրացուցիչ վարկային արտոնություններ են տալիս հաճախորդներին, ովքեր ցանկանում են ձեռք բերել անշարժ գույք: «Ամերիաբանկը» ՀՀ հիփոթեքային շուկայում ունի 22 տոկոս մասնաբաժին, եւ տարիներ շարունակ՝ շուկայի առաջատարն է: Մեր հաճախորդների վստահությունը եւ հետաքրքրվածությունն ավելացել է, ինչի արդյունքում մեր հիփոթեքային վարկային պորտֆելն այս տարի արձանագրել է ավելի քան 50 միլիարդ դրամի աճ՝ հատելով 285 միլիարդի շեմը»,- ասաց «Ամերիաբանկի» երկարաժամկետ բանկային ծառայությունների ուղղության ղեկավար Վահրամ Գեւորգյանը:

«Ամերիաբանկի» հիփոթեքային վարկավորման պրոդուկտային թիմի ղեկավար Լիանա Աղայանն էլ նշում է, որ Տուն էքսպոն տարվա կարեւոր միջոցառումներից է եւ մեկ հարթակում է միավորել շուկայի բոլոր մասնակիցներին՝ գնորդներին, վաճառողներին, բանկերին, կառուցապատողներին եւ բրոքերներին

«Մենք մշտապես կարեւորել ենք մեր հաճախորդների կարիքների բացահայտումը եւ այսօր նույնպես ունենք հնարավորություն՝ լսելու նրանց առաջարկները, ինչը մեզ կօգնի բարելավել մեր պրոդուկտային պայմանները հետագայում: Մեր կառուցապատողների հետ կառուցում ենք կայուն, վստահելի եւ երկարաժամկետ հարաբերություններ: Այսօր համատեղ մշակել ենք հատուկ առաջարկներ, ինչը հնարավորություն կտա Տուն էքսպոյի մասնակիցներին ձեռք բերել իրենց երազանքների գույքն ավելի ցածր տոկոսադրույքով եւ ավելի ցածր գնային պայմաններով», - ասաց Աղայանը:

Էքսպոյի այցելուների համար «Ամերիաբանկն» առաջնային շուկայից անշարժ գույքի ձեռքբերման օնլայն վարկի համար սահմանել է ավելի ցածր տոկոսադրույք՝ տարեկան 13%-ի փոխարեն 12.5%:

«Ամերիաբանկը» հիփոթեքային վարկ է առաջարկում նաեւ Սփյուռքի մեր հայրենակիցներին: Անկախ բնակության վայրից ու Հայաստանում գրանցված եկամուտ ունենալու հանգամանքից՝ նրանք կարող են գնել, վերանորոգել կամ կառուցել տուն Հայաստանի ցանկացած անկյունում: Վարկավորումն իրականացվում է առանց տրամադրման ու սպասարկման վճարների:

«Ամերիաբանկը» հատուկ առաջարկ ունի նաեւ ներդրումային եւ գրավով ապահովված վարկերի համար: Բանկի ներդրումային վարկը Հայաստանում առաջին եւ դեռեւս միակ վարկատեսակն է, որով հնարավոր է գնել անշարժ կամ շարժական գույք արտերկրում:

«Տվյալ վարկերը տրամադրում ենք մինչեւ 20 տարի մարման ժամկետով, տարբեր արժույթներով՝ ըստ հաճախորդի ցանկության: Տուն էքսպոյի շրջանակում ունենք բացառիկ արտոնություններ տվյալ վարկատեսակի մասով, ինչի համար բոլորին հրավիրում ենք մեր տաղավար՝ բաց չթողնելու այս մեծ հնարավորությունը ներդրումային գույքի սեփականատեր դառնալու համար», - նշեց «Ամերիաբանկի» ներդրումային եւ գրավով ապահովված վարկավորման պրոդուկտային թիմի ղեկավար Մարիաննա Հովհաննիսյանը:

«Ամերիան» էքսպոյի այցելուներին առաջարկում է տարեկան 1%-ով ավելի ցածր տոկոսադրույք դրամային, դոլարով եւ եվրոյով վարկերի համար, տարեկան համապատասխանաբար՝ 13%, 9,5% եւ 7,5%:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐԿԵՐ, ՎՃԱՐՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ 2023 թվականին ՀՀ-ում շրջակա միջավայրի եւ բնական պաշարների մասին:

2023 թվականին բնապահպանական հարկերը եւ բնօգտագործման վճարները կազմել են 8 միլիարդ 966 միլիոն 600 հազար դրամ, որի 61.2%-ը բնապահպանական հարկերն են (վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային եւ ջրային ավազան) արտանետելու, արտադրության եւ սպառման թափոնները շրջակա միջավայրում տեղադրելու, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրության եւ սպառման համար), 38.8%-ը՝ բնօգտագործման վճարները (ջրօգտագործման, ոչ մետաղական հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի եւ աղի արդյունահանված պաշարների, կենսապաշարների օգտագործման համար):

Այսպիսով, 2023 թվականին մայրաքաղաք Երեւանում բնապահպանական հարկերն ու բնօգտագործման վճարները կազմել են 5 միլիարդ 155 միլիոն 927 հազար դրամ, որից 4 միլիարդ 669 միլիոն 54 հազար դրամը՝ բնապահպսպական հարկերն են, իսկ 486 միլիոն 873 հազար դրամը՝ բնօգտագործման վճարները:

Արարատի մարզում 2023 թվականին բնապահպանական հարկերն ու բնօգտագործման վճարները կազմել են 1 միլիարդ 126 միլիոն 438 հազար դրամ, որից 100 միլիոն 76 հազար դրամը՝ բնապահպսպական հարկեր են, իսկ 1 միլիարդ 26 միլիոն 361 հազար դրամը՝ բնօգտագործման վճարներ:

Կոտայքի մարզում 2023 թվականին բնապահպանական հարկերն ու բնօգտագործման վճարները կազմել են 669 միլիոն 615 հազար դրամ, որից 81 միլիոն 462 հազար դրամը բնապահպանական հարկեր են, իսկ 588 միլիոն 152 հազար դրամը՝ բնօգտագործման վճարներ:

Սյունիքի մարզում 2023 թվականին բնապահպանական հարկերն ու բնօգտագործման վճարները կազմել են 474 միլիոն 556 հազար դրամ, որից 371 միլիոն 869 հազար դրամը բնապահպանական հարկեր են, իսկ 102 միլիոն 686 հազար դրամը՝ բնօգտագործման վճարներ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ՌԵԱՆԻՄԱՆԻԱ»

ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՆԻՄԱՑԻՈՆ ՖԻԼՄԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ «ՌեԱնիմանիա» Երեւանի միջազգային անիմացիոն կինոփառատոնն անցկացվել է 16-րդ անգամ. արդյունքներն ամփոփվել են, հաղթողներն արդեն հայտնի են:

Փառատոնի ամփոփիչ միջոցառմանն ազդարարվել են մրցութային ծրագրերի հաղթողները: «ՌեԱ» փառատոնում այս տարի ընդգրկված էին 41 ավարտական, 59 կարճամետրաժ եւ 8 լիամետրաժ մրցութային ֆիլմեր:

Ավարտական ֆիլմերի անվանակարգում հատուկ հիշատակման է արժանացել Էրիկա Տոտորոյի (ԱՄՆ) «Հանելուկ»-ը, իսկ «Լավագույն ավարտական ֆիլմ» է ճանաչվել «8-րդ օրը». հեղինակներ՝ Ագաթ Սինիշալ, Ալիսիա Մասսե, Էլիզ Դեբրույն, Ֆլավի Կարի, Տիո Դյուոտուա (Ֆրանսիա):

Կարճամետրաժ ֆիլմերի 1-ին տեղի մրցանակը ստացել է Florence Miailhe-ի (Ֆրանսիա) «Թիթեռը», իսկ ժյուրիի հատուկ հիշատակմանն է արժանացել Լուկաս Մալբրունի (Ֆրանսիա) «Մարգարետե 89»-ը:

«Լավագույն լիամետրաժ ֆիլմ» անվանակարգում հաղթող է ճանաչվել Ադամ Էլիոթի «Խխունջի հուշերը» ֆիլմը, իսկ «Ժյուրիի հատուկ հիշատակում» անվանակարգում՝ Իզաբել Էրգերայի «Սուլթանուհու երազը»:

Լիամետրաժ անիմացիոն ֆիլմի լավագույն գաղափարի համար «Վալենտին Պոդպոմոգովի անվան մրցանակի» է արժանացել Գինթս Ջիլբալոդիսի «Հոսք» ֆիլմը:

«ՌեԱ» փառատոնն այս տարի եւս հագեցած էր բազմաբնույթ ծրագրերով: Փառատոնի շրջանակում ցուցադրվել են 250-ից ավելի ֆիլմեր, որոնց թվում էին Կաննի, Սան Սեբաստիանի, Անսիի եւ Բեռլինի հայտնի անիմացիոն կինոփառատոներում ցուցադրված ֆիլմերը:

Փառատոնի շրջանակում Հայաստան էին ժամանել 20-ից ավելի մասնագետներ Եվրոպայից եւ ԱՄՆ-ից՝ կիսվելու իրենց փորձով, գիտելիքով եւ գնահատելու հայ անիմատորների եւ երիտասարդ ստեղծագործողների տաղանդը:

Արդեն երկրորդ տարին անընդմեջ փառատոնի շրջանակում իրականացվել է նաեւ ReA Comics Art ծրագիրը, որի շրջանակում անցկացվել է Ազգային պատկերապատման նախագծերի մրցույթը: Մրցույթում 1-ին տեղի օժանդակություն-մրցանակը ստացել է Ելենա Ներսեսյանի «Մխիթարանք» պատկերապատումը, 2-րդ տեղի օժանդակություն-մրցանակը՝ Միլենա Ադամյանի «Արձագանքներ» պատկերապատումը, իսկ 3-րդ տեղում «Մթնշաղի երազները» պատկերապատումն էր, հեղինակ՝ Լյուսի Դուրասովա:

Փառատոնի մյուս կարեւոր բաղադրիչի՝ MarAni անիմացիոն շուկայի CoReAct համարտադրության հարթակն այս տարի հյուրընկալել է 17 հայաստանյան նախագիծ: Հարթակի «Ժյուրիի հատուկ հիշատակում» անվանակարգում հաղթող է ճանաչվել «Այծեմնիկ» նախագիծը (ռեժիսոր/պրոդյուսեր՝ Էլինա Երկատյան):

1-ին տեղի մրցանակը շնորհվել է «Տատիկն ու ստվերը» նախագծին (ռեժիսոր/պրոդյուսեր՝ Լիանա Գեւորգյան եւ Seagull Production), 2-րդ տեղում «Իմ ընկեր աղմուկը» նախագիծն է (ռեժիսոր՝ Հասմիկ Սիմոնյան, պրոդյուսեր Սուսաննա Խաչատրյան), իսկ 3-րդ տեղում՝ «Քուլ Դաուն» նախագիծը (ռեժիսոր/պրոդյուսեր՝ Հայկ Կարապետյան եւ Zrah Studio):

«ՌեԱնիմանիա» անիմացիոն ֆիլմերի եւ պատկերապատման արվեստի փառատոնն այս տարի նվիրված էր Հայկական անիմացիայի 85 եւ Հայ կինոյի 100-ամյակներին: Գլխավոր հովանավորը Երեւանի քաղաքապետարանն էր:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՏԱՆԻՔԱՇԵՐՏՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՐԻՆՎԵԼ Է

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն այցելել է Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն՝ ծանոթանալու կատարված հիմնանորոգման աշխատանքներին:

Մասնավորապես, ամբողջությամբ փոխարինվել է օպերային թատրոնի բեմական հատվածի տանիքաշերտը, ինչպես նաեւ հիմնանորոգվել է շենքի տանիքը: Փոխվել է տանիքի ծածկը, այդ թվում՝ տեղադրվել է ջրամեկուսիչ եւ պաշտպանիչ շերտ, վերանորոգվել ու թարմացվել են նաեւ տանիքի այդ հատվածի ջրահեռացման համակարգերը:

Ժաննա Անդրեասյանին զեկուցվել է, որ վերանորոգման աշխատանքների ավարտից հետո տեղացած անձրեւների ժամանակ որեւէ խնդիր չի առաջացել:

Տանիքի վերանորոգման աշխատանքներն իրականացվել են պետական բյուջեի միջոցներով: Շուրջ 1200 քմ մակերեսով տանիքային հատվածի վերանորոգումը տեւել է 6-7 ամիս:

ԱՅԼԵՆ ՊՐԻՏՉԻՆԸ ՋՈՒԹԱԿԻ ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐՈՎ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 30-ին՝ ժամը 19:00-ին, «Առնո Բաբաջանյան» համերգասրահում կկայանա ջութակահար Այլեն Պրիտչինի մենահամերգը: Երեւանյան համերգի ընթացքում Այլեն Պրիտչինը հանդես կգա մենանվագ ջութակի համար գրված ստեղծագործությունների կատամամբ: Կհնչեն Յ. Ս. Բախի, Է. Իզայիի, Բ. Բարտոկի, Ա. Խաչատրյանի մենանվագ սոնատները:

«Ակնհայտ է, որ նա հատուկ ասելիք ունի եւ օժտված է բացառիկ երաժշտական տաղանդով, որը գերազանցում է կատարողական հմտության սահմանները» - այսպես է արտահայտվել ջութակահարի մասին Բրունո Մոնսենժոնը:

Այլեն Պրիտչինը Մոսկվայի կոնսերվատորիայի շրջանավարտ է, Չայկովսկու, Կրեյսլերի եւ Վենյավսկու անվան միջազգային մրցույթների դափնեկիր, Մարգարիտ Լոնգ եւ Ժակ Տիբո մրցույթի առաջին մրցանակիր: Համարվում է իր սերնդի ամենավառ կատարողներից մեկը: Որպես մենակատար եւ կամերային երաժիշտ՝ ակտիվ հյուրախաղերով հանդես է գալիս Ռուսաստանում, Ֆրանսիայում, Բելգիայում, Իտալիայում, Գերմանիայում, Կանադայում, Ճապոնիայում, Չինաստանում, ԱՄՆ-ում:

Ելույթներ է ունեցել այնպիսի երաժիշտների եւ նվագախմբերի հետ, ինչպիսիք են Թեոդոր Կուրենտզիսը, Դավիթ Գերինգասը, Ալեքսանդր Մելնիկովը, MusicAeterna նվագախումբը, Մարիինյան թատրոնի նվագախումբը, Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը, Թայվանի, Օսակայի եւ Լիվերպուլի ֆիլհարմոնիկ նվագախմբերը:

Կամերային երաժշտության բնագավառում Պրիտչինի մշտական գործընկերներ թվում են Լուկաս Գենիուշասը եւ Յուրի Ֆավորինը, որոնց հետ լույս են ընծայել մի քանի սկավառակներ: 2019-2020 թթ. Ad Vitam եւ Aparte լեյբլները թողարկել են Պրիտչինի կատարմամբ Պրոկոֆեւի, Բարտոկի, Բրամսի ստեղծագործություններով ձայնասկավառակներ:

2020 թվականից երաժիշտը Բրյուսելի եւ Անտվերպենի կոնսերվատորիաների պրոֆեսոր է:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԻՆՉԵՎ 20 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՈՍԿԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Հայաստանի ծանրամարտի կանանց հավաքականի անդամ Ալեքսանդրա Գրիգորյանը դարձավ Եվրոպայի մինչեւ 20 տարեկանների առաջնության ոսկե մեդալակիր:

Լեհաստանում ընթացող մրցաշարի մինչեւ 20 տարեկանների պայքարում մեծահասակների Եվրոպայի առաջնության գործող չեմպիոն Ալեքսանդրա Գրիգորյանը (55 կգ) երկու հաջող մոտեցմամբ պոկեց 81 եւ 85 կգ: Հրում վարժությունում նա գլխավերեւում պահեց 105 եւ 115 կգ: Երկամարտի 200 կգ արդյունքով նա Եվրոպայի մինչեւ 20 տարեկանների առաջնության ոսկե մեդալակիր է:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽԱՂԵՐ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ

Ֆուտբոլի Ռուսաստանի ազգային հավաքականը երկու ամսվա ընդմիջումից հետո հերթական ընկերական խաղերը կանցկացնի:

Ռուսաստանի ֆուտբոլային միության մամուլի ծառայությունը հայտնում է, որ Վալերի Կարպինի գլխավորած թիմը նոյեմբերի 15-ին Կրասնոդարում կընդունի Բրունեի հավաքականին, իսկ չորս օր անց Վոլգոգրադում՝ Սիրիայի ազգային թիմին:

Ռուսաստանի ազգային հավաքականը 2022 թվականից պաշտոնական խաղեր չի անցկացնում:

ՎԻՆԻՍԻՈՒՍԸ՝ ՉԼ ՇԱԲԱԹՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ

Մադրիդի «Ռեալի» բրազիլացի հարձակվող Վինիսիուս Ժունիորը երկրպագուների քվեարկությամբ ճանաչվել է ՈւԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի շաբաթվա լավագույն ֆուտբոլիստ, հայտնում է մրցաշարի մամուլի ծառայությունը:

Բրազիլիայի հավաքականի 24-ամյա ֆուտբոլիստը Դորտմունդի «Բորուսիայի» դեմ հիմնական փուլի երրորդ տուրի տնային խաղում հեթ-տրիկի հեղինակ էր դարձել, «Ռեալը» կամային հաղթանակի էր հասել 5-2 հաշվով:

Շաբաթվա լավագույն ֆուտբոլիստի կոչմանը հավակնում էին նաեւ կատալոնական «Բարսելոնայի» բրազիլացի հարձակվող Ռաֆինյան, իտալական «Միլանի» հոլանդացի կիսապաշտպան Տիջանի Ռեյնդերսը եւ «Մոնակոյի» ճապոնացի հարձակվող Տակումի Մինամինոն:

Ռաֆինյան եւս հեթ-տրիկի հեղինակ էր դարձել: Բրազիլիայի հավաքականի ֆուտբոլիստի երեք գոլերն օգնել էին «Բարսելոնային» 4-1 հաշվով տնային հաղթանակի հասնել Մյունխենի «Բավարիայի» նկատմամբ:

● *Նոյեմբերի 1-ին՝ ժամը 15:00-ին, Խամաճիկների պետական թատրոնում կցուցադրվի պրեմիերա՝ «Փոքրիկ իշխանը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.500 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԱԿՏԵՐ

ՀԱՐՑ. Վարչական ակտերը ո՞ր դեպքում եւ ի՞նչ ժամկետներում են ներկայացվում հարկադիր կատարման:

Մանուկ Արսենյան (28 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածին համապատասխան վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում, իսկ վարչական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դեպքում՝ հետաձգելու կամ տարաժամկետելու ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտը, որպես ընդհանուր կանոն, դառնում է անբողոքարկելի այն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 ամսվա ընթացքում, վարչական բողոք չներկայացնելու դեպքում:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտը դառնում է անբողոքարկելի այն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 ամսվա ընթացքում, վարչական բողոք չներկայացնելու դեպքում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ընտրություններին մասնակցելու համար ինչ է անհրաժեշտ կուսակցության համար: Խնդրում եմ ասել տեղական ինքնակառավարման մարմինների եւ խորհրդարանական ընտրությունների առանձնահատկություններն ու տարբերությունները:

Միքայել Փանոսյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կուսակցության ստեղծման գործընթացում տարբերություններ առկա չեն: Կուսակցությունները կարող են մասնակցել ինչպես խորհրդարանական, այնպես էլ ՏԻՄ ընտրություններին: Բուն ընտրական գործընթացների վերաբերյալ առանձնահատկությունները նախատեսված են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կուսակցության պետական գրանցումը կատարում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ Արդարադատության նախարարությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Երեկ հայտարարվեց, որ Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմական հատվածի տանիքաշերտն ամբողջությամբ փոխարինվել է, հիմնանորոգվել է նաեւ շենքի տանիքը: Այնտեղ տեղադրվել է ջրամեկուսիչ եւ պաշտպանիչ շերտ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 3 +17 + 19
Արմավիր	-1 + 2 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-2 - 5 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +17 + 19
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Երեւան	+ 6 + 8 + 16 + 18

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*